# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1291-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով, 35-րդ հոդվածի 16-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի N 01/111.6/05877-2024- 19/07/2024 գրությունը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականության հանդիսացող, 06-023-0046-0023 կադաստրային ծածկագրով 0,287862 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը, բնակելի տուն կառուցելու նպատակով, բնակավայրերի այլ հողատեսքից փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2.Անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում 3-րդ փողոց 45 հողամաս փոստային հասցե:

3.Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

25 հոկտեմբերի 2024
գ. Փամբակ